ոսկի շատ, որ 3 կերպ է. մինն իբրեւ զաւազ, 2 որպէս բակլայ և սիսեռն. 3 բուսուն ոսկի որպէս ծներեկ ի մէջ զամիչի։ Եւ անուն Թագաւորաց քաղաքին մեծի ասի Թումպիա. երկրորդին Տիգրէ. երրորդին Աւղավ. 4 Բազա. 5 Հաւէ. 6 Ճիլկա։ Իսկ Անարու Թագաւորն որ է մօտաշ Օսմանցոց և Հապաշին, իւր երկիրն է խիստ ադալաթ որ ոչ գող կայ, և ոչ բոզ. եւ երկիրն բնաւ գերմայլուկ չկայ ոչ 'ի մտաներն և ի յեղաներն և Թագաւորն է յոյժ ձեռն առատ. եւ ինքն աղքատազգեստ եւ աղքատասէր եւ մեծազլուխ քան զամենայն մարդիկ երկրին։ Եւ իմ կացեալ ի Հապաշստան Դ ամիս. խնդրեցի հրաման երթալոյ. զի ոչ կարացի կեալ վասն մշտացուցանելոյ զմեզ քահանայիցն յաղագս հարցափորձի բազմիցս օրէնաց մերոց և հաւատոց համար։ Եւ գրեաց Թագաւորն յանձնարարական գիր 'ի վրայ Անարու Թագաւորին որոյ անունն ասի Բադէն որ է Թագաւոր արաբաց և կոչի Թուրք. բայց ոչ ունի զօրէնս Թուրքաց, և ելեալ ի Թումպիու Ի օրուան հասաք ի Զանկ Շաղայ որք են կռապաշտ արապ և կէս մի քրիստոնեայ են դարձեալ. ճանապարհն և երկիրն ամէն չէնութիւն է. ի Զանկշալու ԻԳ աւուր ճանապարհն ի վերայ Նիլ գետոյն